



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. ՌԵՏԿԵՆ

ՌԳՊՍՏԱՄԻ ՄԵԿԸ

Կ Ե Տ Է Դ Ա Տ  
ՅԵՐԿՈՒՆ 1930

15 JAN 2010  
27 SEP 2006

Գ. ՌԻՏԿԵՄ

327  
ՌԻ-85

ԱԿ

17890

# ՌԳՈՍՏՈՒԻ ՄԵԿԸ

13921-57



1931

ՇԵՐԵՎ. ԵՆ

27 AUG 2013

10590

### ՀԻՇԻՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

«ՅԵՐԵՂԻԱ պատերազմի պատճառների և մտեցող պատերազմի մասին մտածող միլիոն ու միլիոն մարդկանց առաջ ավելի և ավելի պարզ և ահեղ ճշմարտությունը՝ չի կարելի դուրս գալ իմպերիալիստական պատերազմից և դրան անխուսափելիորեն ստեղծող իմպերիալիստական աշխարհից... չի կարելի դուրս գալ այդ դժոխքից այլ կերպ, քան բայլչեվիկյան պայքարի և բայլչեվիկյան հեղափոխության միջոցով»:

(Լենին Վ. XVIII, էջ 366).

ՊԵՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ  
 ԳԼԱՎԼԻՑ 6696 (Բ)  
 ՊԵՏՎԵՐ 4124  
 ՏԻՐԱՇ 3000

Յերբորդ անգամ մենք պիտք է անցկացնենք Միջազգային կարմիր որը՝ իմպերիալիստական պատերազմի աճող վտանգի դեմ պայքարելու որը: Սկսած 1930 թ. ոգոստոսի 1-ի շրջանից կապիտալի յերկրներում հետևողականորեն և անչեղ կեքզով խորանում է տնտեսական ճգնաժամը: Իմպերիալիստական յերկրներին միջև հակասություններն ավելի յեն սրվել: Շուկաների պարունակության հետագա նեղացումը, փոքրակես հեռանք աշխատավորական մասսաների սղջատության և դնողական ունակության իջեցման, բերում է կապիտալիստական արդյունաբերության մի շարք ճյուղերի արտադրության անբեղհատ սահմանափակմամ:

Վերցնենք թեկուզ 1931 թ. առաջին ամիսներում

համաշխարհային ճգնաժամի հետևյալ ցուցանիշները՝  
մի քանի յերկրների վերաբերմամբ.

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ.

Պողոտաի արդյունաբերությունը բեռնված է միայն իր  
զորեղուի՛յան 44 %-ով, անցյալ տարվա մայիս ամսին  
ի դեպ 76 %-ի դիմաց: Պողպատի 22 գլխավոր միու-  
թյունների շահույթը ներկա տարվա առաջին յեռամ-  
սյակում բնկել է 900|օ-ով անցյալ տարվա համեմատու-  
թյամբ:

Իսպանիա. — Պատրաստի յերկաթի արտադրությու-  
նը ներկա տարվա առաջին յեռամսյակում հավասար է  
319.174 տոննի, այսինքն 86435 տոնով պակաս անցյալ  
տարվա համապատասխան ջրջանի արտադրություներից:

Պողպատի արտադրանքը ներկա տարվա ապրիլ ամ-  
սում հավասար էր 125.380 տոնի, այսինքն 17722 տոն-  
նով պակաս 1930 թ. ապրիլ ամսվա արտադրությու-  
նից:

Լեհաստան. — Մետաղամշակման արդյունաբերու-  
թյունը գանձում է չափազանց ծանր դրություն մեջ:  
Իջնում է զյուղամետաղական մեքենաների արտադրու-  
թյունը՝ գյուղի կողմից պահանջ ջլինելու հետևանքով:  
Քիմիական արդյունաբերության մեջ զյուղամետաղու-  
թյան պահանջը շատ ջնշին է: Չնայած, վար սուպեր-  
ֆոսֆատի գինն իջեցված է 15 %, դրա սպասումը սե-  
զոնում կազմում էր 2300 վագոն՝ 6600 վագոնի դիմաց  
1929 թ-ին:

Ֆրանսիա. — Ածուխի և կոկսի սրական արտա-  
դրությունը Ռուրում կազմում է. —

Նախորդ — Ապրիլ 1930 . . . . .	Հազար տոններով	
	Ածուխ	Կոկս
1931 . . . . .	1553	348
	1202	226

Այս փաստերը ցույց են տալիս, վոր կապիտալիզմի  
արդյունաբերության ճգնաժամը, վորը սերտորեն  
կապված է զյուղամետաղական մեջ յեղած ճգնաժա-  
մին, է՛լ ավելի յե սրվում և տանում է դեպի բանվոր  
դասակարգի հետագա աղքատացման ու մահը և միջակ  
զյուղացիության քայքայման:

Ճգնաժամի հետևանքով ավելի յե աճում գործա-  
զուրկների բանակը, վոր հասնում է ավելի քան 35  
միլիոն մարդու: Կապիտալիստական ձեռնարկատերերը  
ուժեղացնում են իրենց հարձակումը բանվոր դասու-  
կարգի կենտական մակարդակի դեմ, իջեցնելով աշխա-  
տավարձը, յերկարացնելով բանվորական որը, մտցր-  
նելով կրճատ բանվորական շարաթ, ոսպիոնայացման  
նոր գիշատիչ մեթոդներն և այլն:

Հետաքրքրական է բերել մի քանի պաշտոնական  
տվյալներ ինքնասպանությունների աճման մասին,  
վորպես հետևանք ճգնաժամի կապիտալիստական մի  
քանի յերկրներում: Գերմանիայում 1928 թ. ինքնու-  
սպանության դեպքերի թիվը հավասար էր որական  
44-ի, իսկ 1930 թ. — 58-ի: Յուրաքանչյուր 100 հա-  
զար բնակչին ինքնասպանությունների թիվը միջին  
թիվով հավասար էր՝ Անգլիայում 1918 թ. 7,5, Իսկ 1928  
թ. — 12,4, ՀԱՄՆ. 1918 թ. 12, իսկ 1929 թ. 13,3:

Վորպես հակադրություն ավելի և ավելի խորացող  
համաշխարհային տնտեսական ճգնաժամի, մենք տես-  
նում ենք սոցիալիստական շինարարության բուռն վե-  
րելք ՌՍՀՄ-ում: Լենինյան Կոմունիստական կուսակ-

ցության ղեկավարութեամբ Միութեան բանվոր դասակարգը և գյուղացիական ամենալայն մասսաները վճռականացես հաղթահարելով դասակարգային թշնամու (հուլայի, նեպմանի, վասարարի) հակադրեցուցությունը, բուլեիկորեն պայքարելով հոմկուսակցութեան գլխավոր դժի համար, խոչըր նվաճումներ ձեռք բերին:

Գործադրելութեան լրիվ վերացումը և արդյունաբերական բանվորները քանակը 1931 թ. 2 միլիոն մարդով ամերացնելը, նախադատերազմյան մակարդակի համեմատութեամբ աշխատավորձի աճումն 167 տոկոս, սոցիալիստական ազատագրութեան Փոնգի բարձրացումը 1.600.000.000 ուրբուց 1930 թ. մինչև 2.138.000.000 ու. 1931 թ., ձեռնարկությունները կենսից ավելին 7 ժամյա բանվորական օրվան սնցնելը, — ահա սրանք են ԽՍՀՄ բանվոր դասակարգի նյութական բարեկեցութեան աճման մի քանի արդյունքները:

Իսկ արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան ասպարեկում սոցիալիստական հնգամյակի իրականացման համար տարվող պայքարի վճռական ընտրավանքներում կատարվում է համառ, ստեղծագործական ենտուզիազմով լի աշխատանք՝ բնթացիկ տարում ինտուսարիայի 518 նոր հսկաներ գործի ղնելու և 1040 նոր Մեքենա-արահատրային կայաններ հիմնելու համար: Արդեն դերակատարված և չբախտումիջակային անասությունները կոլեկտիվացման 1931 թ. ծրագիրը (55,9% -ից բարձր), գլխավորեն բնթարձակված և ցանքերի տարածությունը՝ նախորդ տարվա համեմատութեամբ, համատարած կոլեկտիվացման հիման վրա վերացվում և կուլեկտիվները վորդես դասակարգի, հնգամյակը հաջողութեամբ իրականացվում և 4 տա-

բում, իսկ մի շարք հիմնական ճյուղերում՝ 3 տաբում, իսկ մի շարք խոչըր ձեռնարկություններ հնգամյակը կատարել են 2½ տարում:

«Այս բոլորից յերևում է, վոր ներկա տարին, հանդիսանալով պատմական ընկման տարի, ցույց տվեց կապիտալիստական սխտեմի աճող ճղնաժամը ու դասապարտվածությունը և՛ սոցիալիստական շինարարութեան հաղթական վերելքը: Հասնում է կապիտալիստական ստարիկ-գաղխայի վախճանը: ԽՍՀՄ-ում ավարտվում է սոցիալիստական սնտեսուքյան հիմքի կառուցումը»:

(ԿիԳԿ-ի XI պլենումի վորոչումներից)

Կապիտալիստական յերկրների տնտեսական ճղնաժամի և սոցիալիստական հասարակութեան կառուցման հակայական ծրագիրն իրականացնող ԽՍՀՄ բանվորների ու կոլտնտեսական մասսաների ձեռք բերած նվաճումների աղղեցութեան տակ աճում և արտասահմանյան պրոլետարիատի հեղափոխական ակտիվությունը: Ընթացիկ տարին արձանագրել և միջադրային բանվոր դասակարգի և դադութային աշխատավորութեան մի շարք փայլուն հաղթանակները կապիտալիզմի, Փաշիզմի և իմպերիալիզմի դեմ մղած հեղափոխական պայքարում: Գերմանիայում, Լեհաստանում և այլ յերկրներում, կոմկուսակցությունների ու դրանց աղղեցութեան նշանակալից աճումը պրոլետարիատի և աշխատավորական մասսաների նկատմամբ, Խորհուրդների ամրապնդումն Չինաստանում և Հինական Կարմիր բանակի հաջողությունները, Հնդկաստանի և Հնդկա-

չինի միլիոնավոր մասսաների աճող հեղափոխական վերելքը, խաղանական պրոլետարիատի հեղափոխական յելույթները, արհմիութենական ուղղիցիայի աճող ազդեցութեամբ արդյունաբերական բանվորների մեջ, գյուղացիական մասսաների հեղափոխական շարժման ակտիվացումը և սոցիալ-դեմոկրատիայի ազդեցութեամբ թուլացումը մասսաների նկատմամբ, — այս բոլորը յուր յայտնի միջազգային պրոլետարիատի հեղափոխական դիրքերի բնականուր ամրապնդումը:

Սոցիալ-Ֆաշիզմը, վոր դուրս է կանգնած բուրժուական մերկամարմին դիկտատուրայի, ի վիճակի չէ դուրս հեղափոխական վերելքի ալիքը: Կապիտալիստական յերկրներ միջև յեղած հակասութեանների խորացումը, վորոնք ծնունդ են նոր շուկաներ, գաղութների նոր վերարաշխում անելու յինչպես և ազդեցութեան նոր շրջաններ ձևաք բերելու համար տարվող պայքարի, — անխուսափելիորեն տանում են դեպի դիմում յելույթի ինքն ինքն:

«Բուրժուազիայի ձգտումը՝ ինքն ինքն հաշտութեամբ դուրս գալու ձգնաժամից, յերկյուղ հաղթանակող սոցիալիզմի հանդեպ, և ինքն ինքն վերանորոգման ու մահացող հակահեղափոխական դասակարգերի (կուլակուլթյան, քաղաքային նեպոստական բուրժուազիայի) աշակցութեան վրա հաշտութեամբ տակադիվայի խորտակումը, ստիպում է միջազգային բուրժուազիային անցնելու տնտեսական ուղիման և սոցիալական ինտերվենցիայի ճանապարհով դրսից հարվածելու տակադիվային»:

ԿիՊԿ-ի XI պլենումի վարչումներից)

Ահա թե ինչու յենք մենք ստում՝ հիշի՛ր լավերիս յիստական պատերազմի մասին: Հիշի՛ր ինքն ինքն յե՛ստիկանի սպանալիքի մասին:

Այլ ուրտունիստները թերազնաստում են պատերազմի աճող վտանգը: Կոմիսսարնում աջ տարրերը հույսները դրել եյին նրա վրա, վոր սոցիալ-դեմոկրատիան կհակադդի ինքն ինքն յե՛ստիկանի:

Ինչ ևս անցյալ տարի ողոստութի 1-ի նախորդակին արող կիստների ֆրանսիական երգանք հրատարակել եր մի հուլիս, ուր բանվորներին կոչ եր արվում ողոստութի 1-ին ցույցեր ջանել, վորովհետև այդ կամպանիան հանդիսանում է այն «ավանտյուրայի քաղաքական յելույթան» արտահայտութեան, վորը «բանվորական սոցիալիզմի դատապարտում և սլարտութեան և անողոստ ուսուցիչների»: Այս հարցում արող կիստները միանգամայն համերայն եյին աջերի հետ:

«Արդյունաբերական կուսակցութեան» և ուսական մեղակիկների պրոցեսը, ֆաշիստների հակախորհրդային յելույթները Ֆրանսիայում, Լեհաստանի, Ռուսիայի և այլ յերկրների դիվանջի շտաբների համաձայնութեանը, ինքն ինքն յե՛ստիկանի սահմանները շրջաններում նրանց միատեղ կատարած ու ռազմական մանելները, «Սորհրդային դեմպիստի» և այսպես կոչված «ինքն ինքն հարկադիր աշխատանքի» դեմ տարվող մերկամարմին կամպանիան, վոր հանդիսանում եր ինքն ինքն պատերազմի բացարձակ նախապատրաստում, — այս բոլորը հիմնովին ժխտեց Սորհրդային յերկրի դեմ ինտերվենցիայի աճող վտանգի բոլոր տեսակի ուրտունիստական թերազնաստումները:

Հիշի՛ր պատերազմի մասին:

Յեկ Միջազգային Կարմիր ուրը պետք է ընթացիկ տարում մասսաների առաջ բաց անի իմպերիալիզմի խակահան դեմքը և սոցառադիկնի նրանց՝ «համաշխարհային պրոլետարիատի հարվածային բրիգադան» հանդիսացող ԽՍՀՄ դեմ կազմակերպվող ինտերվենցիային վճարական հակահարված սալու համար:

### Իմպերիալիզմի ազդեական մեքենայի հարվածային տեմպերը

35 միլիոն գործազուրկներ:

Սակայն իմպերիալիստական յերկրներում գոյություն ունի արդյունաբերության մեկ ճյուղ, վորը դարձազրկություն չէիտե, ուր իրոք կիրառվում են աշխատանքի հարվածային տեմպեր:

Դա արդյունաբերության այն ճյուղն է, վորը շտապում է դալիք իմպերիալիստական պատերազմի համար պատրաստել հարյուր հազարավոր մահաբեր գործիքներ, միլիոնազոր հրացաններ, դալով և վառողով լցված անթիվ քանակությամբ ոււմբեր, տանյակ հազարավոր տանիկեր, թնդանոթներ, կատարելադործված ումբաձիղեր, միտրալեղներ և այլ ուղմական նյութեր, վորոնք ամենից առաջ ուղղված են բուրժուազիային և սոցիալ-ֆաշիզմին անասանի ինորհրդային յերկրի աշխատավորական մասսաների դեմ:

Կանոնավոր կերպով, յուրաքանչյուր մի քանի ամսից հետո, ժնևում գումարվում են Աղզերի Լիդայի զանազան կոնֆերանսները՝ նվիրված Յեվրոպայի դինաթալման ու յաղապության: Սակայն այդ կոնֆերանսները, ուր լավում են Բրիտանների, Հենդերսոնների, Բենեշների, Զալեկիների և կապիտալիստական պետու-

թյունների այլ միլիտարների հանդիսավոր ճառերն ու դեկլարացիաները՝ իրենց պատրաստակամության մասին՝ այդ պետությունները միջև առաջացած տարածայնությունները յաղաղ ճանապարհով լուծելու համար, իրականում հանդիսանում են յտրամանկաբեն հնարված ծածկոցներ՝ իմպերիալիստների իտիական ծրագրները ջողարկելու և ժողովրդական մասսաների ուշադրությունը հեռացնելու համար այն ինտերվենցիայի տեղային նախապատրաստումից, վոր կատարվում է բուրժուազիայի ուղմական գործարաններում:

Իմպերիալիստական հինգ յտոչոր պետությունները, այն է՝ Անգլիան, Յապոնիան, Յրանիան, Իտալիան և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները սպառազինման համար կատարել է հեռեկալ ծախքերը.—

1913 թվին . . . . .	2.300 միլիոն ուրլի
1926 » . . . . .	3.900 »
1930 » . . . . .	5.700 »

Այսպիսով մենք տեսնում ենք, թե ինչպես իմպերիալիզմը հանձինս իր հինգ յտոչորազույն ներկայացուցիչների 1930 թ. սպառազինման համար ծախսել է յերկու և կես անգամ ավել, քան 1913 թ., վոր հանդիսանում էր առաջին համաշխարհային սպանդանոցի նախորեն:

Ինչպես է սպառազինման քանակական աճումը.

	1914 թվին		1930 թվին	
	Գնդացիներ	Տանիկեր	Գնդացիներ	Տանիկեր
Յրանիա . . . . .	1300	—	35000	2000
Անգլիա . . . . .	900	—	13000*	450
ՀՄՄՆ . . . . .	13	—	35000	550

\*) Չհաշված անգլո-հնդկական բանակի զնդացիները.

Իմպերիալիստական այս խոշոր թելադրող յերկըր-  
 ներից հետ չեն մնում նաև իմպերիալիզմի վաստղ յեր-  
 կրները, այն է՝ Փոքր Անտանտան (Հարավ-Սլավիա,  
 Զեխո-Սլավիա, Ռումինիա), Լեհաստանը և Մերձբալ-  
 թյան յերկրները: Ամբողջովին կախված լինելով այս  
 կամ այն իմպերիալիստական խմբակցությունից, այդ  
 յերկրները կատարելով Ֆրանսիայի, Անգլիայի և ՀԱՄՆ  
 դիվանդոր շտաբների կամքը, սպառազինվում են վա-  
 ախից-գլուխ՝ աշխատավորական մասսաների արջան և  
 քրտինքի հաշվին: Իմպերիալիզմի դալիք պատերազմի  
 ժամանակ ԽՍՀՄ դեմ առաջին հերթին դուրս յեն դա-  
 յու Լեհաստանը, Ռումինիան, և Մերձբալթյան պետու-  
 թյունները, և այդ պատճառով իմպերիալիզմի դիվան-  
 վոր շտաբը հայրաբար հողում է, վոր այդ վասալ (նը-  
 բանցից կախում ունեցող) յերկրները «պատվով քննու-  
 թյուն բռնեն»:

Այս առթիվ հետաքրքիր տվյալներ և բերում դեր-  
 մանական «հերդիներ Բերդեն Յեյտունգ» բուրժուա-  
 կան թերթը: Ինչպես հայտնի յե, Զեխո-Սլավիայում  
 դանվում են Եկողի խոշոր ռազմական դործարանները:  
 Այդ դործարանները մինչև 1930 թ. վերջը կատարել  
 են հետեվյալ պատվերները.—

Ռումինիայի համար,—65.000 հրացան, 30.000  
 միտրալեզ, 200 հրանոթ, 200.000 արկ(снаряд),  
 500.000 գազային դիմակներ, 100 ռազմական ինքնա-  
 թիռներ:

Լեհաստանի համար,— 500 կրակոթ, 10.000 միտ-  
 րալեզ, 20 ռազմական ինքնաթիռներ:

Ֆինլանդիայի, Եստոնիայի և Լատվիայի համար,

100 հրանոթ, 100.000 արկեր, 16 ռազմական ինք-  
 նաթիռներ:

Ինքնուրույն զանգվածային յե, վոր սպառազինման  
 համար կատարված այդ հսկայական ծախքերը կազ-  
 մում են այդ յերկրների ընդհանուր-պետական բյու-  
 ջեյի հսկայական մասը: Այսպես, որինակ՝ յեղնելով  
 պաշտոնական արդյուրների տվյալներից (հետեվապես  
 փոքրացված), Ֆրանսիան սպառազինման համար ծախ-  
 քում է իր բյուջեյի 21,1 տոկոսը, Անգլիան—15 տոկո-  
 սը, Իտալիան—23,8 տոկոսը, Ճապոնիան—27,8 տո-  
 կոսը, ՀԱՄՆ 18,4 տոկոսը:

Որքհրային Միությունը ունենալով անընդդրելի  
 սահմաններ և անընդհատ իմպերիալիստական ավան-  
 տյուրանների պայմաններում սպառազինման համար  
 ծախսում է իր բյուջեյի 11 տոկոսը միայն:

Անգամ Գերմանիան, վոր ընթացիկ տարում առկա-  
 ված եր, համաձայն Յունզի ծրագրի, իմպերիալիստա-  
 ճան պետություններին իր ունեցած պարտքերի մի մա-  
 սը վճարելու համար հատկացնել 3656 միլիոն մտրկ,  
 իր սպառազինման համար ծախսել է հետեվյալը.—

Նավատորմի և բանակի համար	755,5	միլիոն մտրկ
Ավիացիայի	43,6	» »
Վոսախիանության միլիտարե-		
գացիայի . . . . .	195,0	» »
Գաղտնի սպառազինման . . . . .	41,0	» »

Ընդամենը . . . 1035,1 միլ. մտրկ

Ահա և համաշխարհային իմպերիալիզմի և նրա վա-  
 սալ պետությունների ռազմական նոխարադատաբու-  
 թյունների մասին և, վոր տեղեք է պատմել բանվորին,  
 բանվորուհուն և կոլտնտեսականին՝ Միջազգային  
 կարմիր որը:

Անհրաժեշտ և ջուրջ տալ նրան լիք իրականում  
ինչ և թաղանթած բուրժուական միևնույնների խաղաղա-  
սեր ճատերի տակ: Այստեղից բղխում են ԽՍՀՄ պաշտ-  
պանունակութեան ամբաստանման և Միութիւնն ինտեր-  
վենցիայի վտանգից պաշտպանելու համար միջապա-  
շին պրոլետարիատին մոբիլիզացիայի յենթարկելու,  
ինչպես և իմպերիալիզմի ու նրա գործակալ սոցիալ-  
Փաշիզմի դեմ վճռական պայքար մղելու հսկայական  
խնդիրները:

### Սոցիալ-Ճաւիսներն իմպերիալիզմի հուսան հենարաններն են

Սկսած 1914 թվի համաշխարհային սպանդի նա-  
խորհից միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ  
պատմութիւնը հանդիսանում է բանվոր դասակարգի  
գաժաճանութեան անընդմեջ շղթան, հանդիսանում է  
բուրժուազիայի, Փաշիզմի և իմպերիալիզմի շահերին  
մատուցած հավատարիմ ծառայութիւնը: Բողոքի վերջ  
գեմոկրատիայի, Փաշիստական ռեակցիայի դեմ պայ-  
քարելու ամեն տեսակի յերկերեսանի Ֆրազաներով,  
բոլոր յերկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցու-  
թիւնները գործնականում հանդիսանում են Փաշիզմի  
հավատարիմ հենարանը և բոլոր հակախորհրդային յե-  
լույթների նախապատրաստման, ԽՍՀՄ դեմ ինտերվեն-  
ցիայի կազմակերպման ուղղակի ներշնչողներն ու ոգ-  
նականները:

Ահա թե ինչ և գրում Արդ ինտերնացիոնալի ամե-  
նամեծ սեկցիայի՝ գերմանական սոցիալ-դեմոկրատիա-  
յի կենտրոնական որդան «Փորվերտս» թերթը 1914 թ.  
պատերազմից մի քանի շաբաթ առաջ —

«Ընկերներ» Մենք կոչ ենք անում ձեզ անմիջա-  
պես մտադաշական ժողովների միջոցով հայտաբե-  
րել դասակարգայնորեն գիտակից ամբողջ պրոլե-  
տարիատի հաստատակամութիւնը դեպի խաղա-  
ղութիւն: Հնչել և ահեղ դանդը, — վերջին ամբողջ  
տասն տարվա ընթացքում չի յեղել նման լուրջ մո-  
մենտ: Վտանդն առաջ է շարժվում: Մպանում է  
համաշխարհային պատերազմ: Խաղաղ ժամանակ  
ձեզ հարստահարող, շահագործող և արհամարհող  
տիրապետող դասակարգերն այժմ ցանկանում են  
ոգտագործել ձեզ վորպես թնդսնոթի միս... Կոր-  
չի պատերազմը: Մենք պատերազմ չենք ուզում»:

Սակայն պատերազմի դեմ ուղղված այդ կոչի մա-  
սին սոցիալ-դաւաճանները մոռացան այն որը, յերբ  
գերմանական միլիտարիզմը դեռքի ղեկից: Մինչև դե-  
րեզման հավատարիմ մնալով իրենց սոցիալիստ բուր-  
ժուազիային, գերմանական ռայխստաղի սոցիալ-դեմո-  
կրատական Փրակցիան 1914 թ. ոգտտոտի 4-ի իր գեկ-  
լարացիայում արդեն բոլորովին այլ բան եր գրում,

«Մենք այժմ կանգնած ենք պատերազմի անողոք  
փաստի առաջ: Մեզ սպանում են թշնամու արշա-  
վանքի օարսափները: Այժմ մենք պետք է վճռենք  
վոչ թե պատերազմի դեմ կամ կողմ դուրս դալու  
հարցը, այլ հայրենիքի պաշտպանութեան միջոց-  
ների խնդիրը: Մենք պետք է արդարացնենք մեր  
սեփական խոսքերը, — «Վտանգի ժամանակ, մեր  
հայրենիքը չենք թողնի բախտի քմահաճույքին»:  
Առաջորդվելով այդ սկզբունքով, մենք քվեարկում  
ենք հոգուտ պահանջված պատերազմական վարկե-  
րի»:



պաժարութիւնը միանգամայն պարզորեն ապացուցեց, զոր «Տարզպոմբ» Փարիզից դրամալորում եր ուսուսական մենչեվիկները վնասակար հակահեղափոխական աշխատանքները: Իսկ Շերերը, Իկովները, Զալկենդները և մյուս հին մենչեվիկները վորոնք աշխատում էին խորհրդային հիմնարկութուններում և նախապատրաստում էին սոցիալիստական արդյունարերության, տրանսպորտի և բանվորական մատակարարման դարձի տապալումը հողուտ ինտերվենցիայի, այդ ուղղությամբ միանգամայն պարզ և կարուկ հրահանգներ են ստացել անմիջապես II-րդ Ինտերնացիոնուլի Գործկոմի անդամներից:

Այստեղից պարզ է միջազգային սոցիալ-Ֆաշիզմի և իմպերիալիստների տակտիկայի ընդհանրութունն ու միասնութունը՝ ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա նախապատրաստելու հարցերում: Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ յերկրներում վերջերս անդի ունեցած սոցիալիստական կուսակցութունների համադումարները ամբողջապես հայտնաբերեցին իրենց սոցիալ-իմպերիալիստական դեմքը: Այդ տեսակետից բավականին բնորոշ է Ֆրանսիական սոցիալիստական կուսակցության վերաբերմունքի հարցը «ազգային սոցիալիստության» նկատմամբ: Պատգամավորներից մեկն ամբողջ համադումարի վորոտալից ծափահարութունների տակ տասաց, — «Մեմֆ, սոցիալիստներս բնդունում ենք ազգային պաշտպանության անհրաժեշտութունը՝ կապիտալիստական հասարակարգում»:

Ի լրումն դրան, Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության ականավոր լիդեր Բլյումն տասաց, — «Համադումարում տարածայնութուններ տուջաղան միայն

պատերազմի դեմ պայքարելու մեթոդների մասին: Երբ պատակների մեջ գոյություն ունի կատարյալ միասնութուն»:

Պատերազմի պատրաստման խնդրում սոցիալ-Ֆաշիստների և միջազգային իմպերիալիզմի միջեվ յեղած այդ միաբանությունը պահանջում է մանրամասնորեն պարզաբանել մասսաների առաջ սոցիալ-Ֆաշիզմի ելությունը, վորպես բուրժուական դիկտատուրայի հիմնական և հուսալի հենարանի: Դրա համար պետք է լայնորեն ողտադործել ողոստոս 1-ի կամպանիան: Անհրաժեշտ է հիշել ԿիԳԿ XI պլենումի վորոշումներից հետեվյալը. —

«Յուրաքանչյուր կոմկուսակցության և յուրաքանչյուր առանձին կոմունիստի պարտականությունն է՝ մերկացնել սոցիալ-դեմոկրատներին, վարպես իմպերիալիստական բուրժուազիայի գարծակալների՝ ԽՍՀՄ բանվոր դասակարգի դեմ ուղմական ինտերվենցիա ւտարաստելու գործում, մերկացնել նրանց խաբեքա պացիֆիզմը, վորպես ուղմական պատրաստությունների որգանական, բաղադրիչ մասը»:

«Յուրաքանչյուր կոմունիստի պարտականությունն է՝ մերկացնել, վոր «պայքար զինաքապիման հեմար», նախկին քշնամի յերկրներէ «մերծեցման» մասին բուրժուազիայի և սոցիալ-պացիֆիստների յողունդները հանդիսանում են վոր թեժողովուրդների մերձեցման և խողաղության աղահովման յողունդներ, այլ դա ԽՍՀՄ դեմ բողարկված ճակատի կազմակերպումն է միայն»:

## ԲՈՒՐԺՈՒԱԳԻԱՆ ԱՊԱԿՈՎՈՒՄ Ե ՅԻԿՈՒՆԲ

ՎՈՐԱԿՍՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂԱՆԱ ԻՐ ՂԻՆՎՈՒԹ ՀՐՈՍԱԿՆԵՐԸ ՆԵՍԵԼ ԳԱՂԵ ԻՄԱԿԵՐԻԱՄԱՍԿԱՆ ԱԿԱՆԵՐԱԳՈՒՄ ԴԱՂՈՐ, ՎՈՐԱԿՍՈՒԹՅԱՆ ԵՐԱԿԱՆԱԳՆԻ ԻՐ ԻՆՏԵՐՎԵՆՅՈՒՆԻԱՄԱՍԿԱՆ ԾՐՐԱԳՐԵՐԸ ԽՍՀՄ ԴԵՄ, ԲՈՒՐԺՈՒԱԳԻԱՆ ԱՂԵՄՔ Ե ԽԱՂԱՊԱԳՆԻ ՀՆԴԱՎՈՒԹՅԱՆ ԱՃՈՂ ԱՂԻՐՐ, ՀԱՆԳԱՏՈՒԱԳՆԻ ԻՐ «ԹԻԿՈՒՆՔ» :

«ԽՍՀՄ ԹՆՄԱՌՈՒ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ ՆԵՐԿԱՅՈՒՄՆ ԱՆ ՎՈՂ ԹԵ 1918 Թ. սաղմնային կոմունիստական կադմակերպութիւններ, այլ բայլէվիլիյան կուսակցութիւններ, վճռոնք կանդ չեն առնի այն հանգամանքի դեմ, վճռապէս ԽՍՀՄ դեմ առաջացած պատերազմը վերածեն քաղաքացիական կռիւ՝ ընդդեմ բուրժուազիայի. կատիտալիստական յերկըրները և դադուլները աշխատավորութիւնը իրենց առաջ ունեն ԽՍՀՄ-ում հաղթանակող սոցիալիզմի հակապական փորձը...»

... ԹՈՂ ՐԱՎ ՀՈՍԿԱՆԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՅՈՒՄԻ ՀՐԱՀՐՈՂ II-ը ԻՆՏԵՐՆԱԳԻՏՈՒՄԱՂԻ ՍՈՑԻԱԼ-ՓՈՒՍՏԱԿԱՆ ՀԵՐՈՒՆԵՐԸ, ՎՈՐ չեն լինի այնպիսի սոցիալ-դեմոկրատական բանվորներ, վճռոնք պատերազմի դուրս գան ԽՍՀՄ դեմ, այլ կլինեն այնպիսիները, վճռոնք կոմունիստական և անկուսակցական բանվորների հետ միասին թիկունք թիկունքի սլած քաղաքացիական կռիւ կեղնեն կատիտալիստական հասարակակարգի և ինտերվենտները դեմ» :

(ԿԻԳԿ XI պլենումում ընկ. Մանուիլսկու արտասանած ճառից) :

Այո, բուրժուազիայի թիկունքում դրութիւնը բա-

րեհաջող չի : Ազգասացած և քաղցի մասնավոր մասունների կյանքի մակարդակի դեմ կատիտալիզմի հարձակմանը պրոլետարիատը կատապոստիանի դժբաղուրներով, բանվորներով, դժբաղուրներով մարտական ցույցերով աշխատողների հետ միասին և կենտամթերքների պահեստներն ավերման յենթարկելով :

Մասայական քաղաքական դժբաղուրները չերանանցավ կատիտալիստական յերկըրի վրայով, սկսած Դոմբրովսկու ածխային ալագանից (Ահաստան), Ռուրի շրջանից (Գերմանիա), Հարավ-Ռուսիայի լեռնահանքերի շրջանից (Անդլիա) և վերջացրած հնդկական մանադործների մարտական դժբաղուրով : Քաղաքացիական կռիւ այս ալիքը ամբարնուկց բանվոր դասակարգին, հարյուր հազարավոր բանվորները դուրս բերեց ռեֆորմիստները և սոցիալ-ֆաշիզմի ազդեցութիւնից, ինչպես և ռեֆորմիստների կողմէն յարմարական սեկցիաների հեղափոխական զորամասերի ամբարնուման :

Աշխատավորութիւնն սարկական շահագործման ուժեղացման և բանվորական որվան յերկարացման ու միաժամանակ աշխատավարձի իջեցման հետ միասին, բուրժուազիան սոցիալ-ֆաշիստները հետ սերտորեն կապված կիրառում և վոստիկանական դաժան քաղաքականութիւնը զարգացող հեղափոխական շարժումների դեմ : Կատիտալիստական յերկըրները պետական բյուջեներում բալականին մեծ տեղ և դրամում նոր բանտերի և կայանաների կառուցումները, ինչպես և վոստիկանները հակապական բանակի, քաղաքական վոստիկանութիւնն դժբաղուրների, մասնիչների և բանաստիւնների պահպանման համար ալեկացող ծախքերը :

Ապիտակ տերրորը դառել է ֆաշիստական բուրժուազիայի հիմնական հատկանիշը՝ հեղափոխական շարժումների դեմ կռվելու և ընդդեմ եմՂՄ-ի ինտերվենցիա պատրաստելու գործում:

Թե ինչպես եր աշխատում սպիտակ տերրորի մեքենան 1930 թվին նախորդ տարվա համեմատությամբ ընկ. Ստասովան շատ հետաքրքրականորեն նկարագրում էր ՄՈՊՐ-ի Համամիութենական III համագումարում:

5 տարվա ընթացքում (1925—1929թ.) սպանված է 619979 մարդ:

Միայն 1930 թ. սպանված է 159008 մարդ:

Մահվան են դատապարտված 5 տարում (1925—1929 թ.) 50,411 մարդ:

Միայն 1930 թ. սպանված է 30826 մարդ:

1928 թ. կայացված է 64552 տարվա հարկազեր աշխատանքի դատավճիռ:

Առ 1-ն հունվարի 1930 թ. այդ թիվն կազմում էր 105,472 տարի:

Այս արշավանքի թվերը ցույց են տալիս սպիտակ տերրորի արտասովոր աճումն կապիտալիստական և գաղութային յերկրներում: Միանդամայն հատկանալի յե, վոր սպիտակ տերրորի աճումը հանդիսանում է կապիտալիզմի կրիզիսի և բանտերով ու բռնությունների միջոցով մասսաների հեղափոխական շարժումները կանգնեցնելու համար բուրժուազիայի ձգտումների ուղղակի հետեվանքը:

Հեղափոխական տարրերի նկատմամբ գործադրված բռնությունների և ֆիզիքական տանջանքների մեթոդների այդ շղթայում պատվավոր տեղ է դրավում

Ֆաշիստական Լեհաստանը: Վերջերս Արեւիմտյան Ուկրայինայում պատժիչ եքսպեդիցիայի սարսափներն տաջացրին միջազգային պրոլետարիատի հզոր բողոքը:

Ո՞վ չի հիշում Լուցկում լեհական բանտային ծառայողները գործադրած միջնադարյան տանջանքները: Ո՞վ չի հիշում պան Պիլսուդսկու հավատարիմ ծառայողական Զարեմբի կողմից Լուցկու պատժարաններում քաղաքական կին բանտարկյալների նկատմամբ գործադրված նշավախումները: Անպամ չի անցել կես տարի լեհական բանտերում գործադրվող այդ չտեսնրված եկղեկուցիաներից, իսկ Լուցկու բանտերում բոլոր 300 քաղաքական բանտարկյալները հացադուլ հայտարարեցին «ի նշան բողոքի՝ անգամ Լեհաստանի պայմաններում գործադրվող բանտային քացառիկ սեծիմք դեմ»:

Իսկ այելի վերջերս Վարշավայի դատարանը ընդհանուր առումով 31 տարվա բանտարկության դատապարտեց յերիտասարդ բանվորներին՝ կոմյերիսմիության պատկանելու համար: Լեհական բանտերը լի յեն քաղաքական բանտարկյալներով: Առանձնապես բռնություններն ու ձերբակալությունները մեծ ծավալ են ստացել Արեւմտյան Ուկրայինայում և Արեւմտյան Բելոռուսիայում, ուր հարստահարված և ազդայնորեն ճնշված աշխատավորական գյուղադիսմիությունը կանգնեց կալվածատիրական ջմահաճույքի և լեհական Ֆաշիզմի դեմ ուղղված հեղափոխական պայքարի ճանապարհի վրա:

Որեց ո՞ր Գերմանիայում ուժեղանում է սպիտակ տերրորը: Այլելի հաճախ են կոմֆիսիկացիայի յենթապրկրվում մամուլի հեղափոխական որդանները, արդելվում են բանվորական ցույցերը: Սոցիալ-Ֆաշիստական

չինովնիկները կատարելով բուրժուադիայի սոցիալական պատվերը, գիժում են փամփուռչաների ոգնության :

Գերմանական կոմկուսացության մի շարք ստաշ-նորդները հանձնված են դատի՝ «մաստններին ապրատամբության դրդելու համար» : Գերմանական վոստիկանությանն ոգնության են դալիս «Պոզպատյա սաղավարդի» Փաշխատական և այլ կազմակերպությունների խմբերը, վորոնք միացյալ ճակատ են կազմել պրոլետարիատի ծավալվող ուժերի ֆիզիքական վոչընչացման համար :

Իր ցինիզմով չլսված յերեկույթ և հանդիսանում (Սակիո և Վանցետտի մահապատժից հետո) ինն յերիտասարդ նեդր-բանվորների վերաբերյալ կայացված դատավճիռը, վորը անդի յե ունեցել Ալբամ նահանգի Սկոտտ-սրտբո քաղաքում (ՀԱՄՆ) : Այլ բանվորները սպիտակ կնոջ վրա հարձակվելու պրոպակացիոն մեղադրանքով դատարարոված են մահվան ելեքտրական աթոռի վրա : Ամերիկական բուրժուադիայի կողմից անմեղորեն մահապատժի յենթարկված Սակիո և Վանցետտի պատմությունը կրկնվում և նորից, սակայն ավելի մեծ չափով : Չտեսնված տնտեսական ճշմարտամ ապրող ամերիկական կապիտալիզմը յանկանում և վախեցնել հեղափոխականացող բանվոր դասակարգին և ցույց տալ իրեն ուժը : Սակայն, ամերիկական դատարանի այդ դատավճիռը առաջացրեց աշխարհի ամբողջ բանվորական հասարակայնության դայրույթը, և այժմ ՀԱՄՆ բուրժուական արդարադատության դասակարգային դատարանը պետք և գործ ունենա դասակարգա-

յին ատելության ավելի ուժեղ կրակի և պրոլետարիատի հեղափոխական հակահարվածի հետ, քան այդ ավելի առաջ եր :

Չինական կարմիր բանակի զորմասերի աճող ասեղ ուժի սարսափի տակ, Չան-կայ-Շին, Չինաստանի աշխատավորության այդ դահիճը, մասսայական մահապատժի յե յենթարկում կոմունիստներին, կոմյերիտականներին և հեղափոխական գործունեյության մեջ կասկածի յենթակա դյուղացիներին : Յուրաքանչյուր որ տեղեկություններ են ստացվում Չինաստանի Սան-կու, Շանհայ և այլ քաղաքներում հեղափոխականների մահապատժիների և դլխատումների մասին :

Յեզ վորքան բարձր և մասսաների հեղափոխական վերելքը, այնքան ավելի կատաղությամբ և իջնում սպիտակ տերրորի սուրը՝ պրոլետարիատի լավազույն և առաջավոր տարրերի վրա : Սոցիալ-Փաշիզմի հետ սերտ միություն կաղմած համաշխարհային բուրժուադիան եր թիկունքն «ասպահովում» և նրա համար, վոր պետի կարելի լինի ավելի ապահով կերպով պատրաստվել իմպերիալիստական պատերազմի : Լեհաստանում, Ֆինլանդիայում, Լատվիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ռումինիայում և այլ յերկրներում հարյուր հազարավոր «արտադորային» Փաշխատական զորմասերը, այսպես կոչված «աղբային պաշտպանության քաղաքացիական կամավորական խմբերը», վորոնք պահվում են դլխավոր շտաբի և պետական բյուջեյի գաղտնի ֆոնդերով, հանդիսանում են իմպերիալիստական բուրժուադիայի հենարանը՝ հեղափոխական շարժումների դեմ պայքարելու գործում :

Բուրժուազիան հասկանում է, վոր միջադպրային պրոլետարիատը համոզված լինելով ԽՍՀՄ սոցիալիստական շինարարութեան հակայական նվաճումների մեջ և զործազրկութեան ու սովի մեջ մաշվելով, ՏԻ կանգնուաւ և վճռական հակահարված կտա ԽՍՀՄ դեմ կազմակերպվող ինտերվենցիայի բոլոր փորձերին:

Բուրժուազիային չեն ողնի վոչ սալտակ տերրորը, վոչ արծիճն ու մտրակը, վորոնցով նա ցանկանում է սպահնովել իր թիկունքը:

### ՄՈՊՐ-ի Համամիութենական III Համագումարը պատերազմի վսանգի մասին

Լինել ինտերնացիոնալիստ, նախ և առաջ նշանակում է պատրաստ լինել պաշտպանելու պրոլետարական հայրենիքը՝ Խորհրդային Միութեանը, իմպերիալիստների զինված հարձակումից: ՄՈՊՐ-ի յուրաքանչյուր անդամը պետք է լավ յուրացնի, վոր միջադպրային պրոլետարական հեղափոխութեանը ավելի շատ սպահնովված կլինի, վորքան ամուր լինի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեանների Միութեանը:

Այստեղից պարզ է.—

Անհրաժեշտ է արթուն կերպով հսկել, վոչ միայն մեք յերկրի ներսում դասակարգային թշնամու կատարած չարժումներին, այլև իմպերիալիստների յուրաքանչյուր քայլին, վորոնք ուղղված են՝ ԽՍՀՄ-ում սոցիալիստական շինարարութեան տապալման, զինված ինտերվենցիա կատարելու, կապիտալիզմի վերականգման և Խորհուրդների յերկրի աշխատավորական մասնաների սարկացման:

Մոպրի Համամիութենական III համագումարը Գործկոմի զեկուցման առթիվ իր ընդունած վորոշման մեջ մատնանշում է, վոր կապիտալիստական և դադութային յերկրների ՄՈՊՐ-ի յեղբայրական սեկցիաները պետք է ավելի լայնորեն կազմակերպեն աշխատավորութեան՝ պայքարելու իրենց ազգային և միջադպրային բուրժուազիայի դեմ, վորոնք հարձակում ենպատրաստում ԽՍՀՄ-ի վրա:

«ԽՍՀՄ վրա իմպերիալիստական հարձակում կատարելու աճող վտանգը, Խորհուրդների յերկրի դեմ ինտերվենցիա կատարելու սխտեմատիկ և բացարձակ պատրաստութեանն առաջադրում է ՄՈՊՐ-ին՝ համաշխարհային հեղափոխութեան պատենչը հանդիսացող ԽՍՀՄ պաշտպանութեան ունակութեանն ամրասնդելու աշխատանքների ծավալման խնդիրը: (ՄՈՊՐ-ի Համամիութենական III համագումարի վորոշումներից):

Պատերազմի վտանգի աճումը և դրա պատճառները պետք է իրենց մշտական արտահայտութեանը զըտենն ՄՈՊՐ-ի բլիշների բոլոր մասնայական ինտերնացիոնալիստական աշխատանքների մեջ: Տնտեսական քաղաքական ձեռնարկումների (պայքար պրոմֆինպանի համար, ցանքի և բերքահալսքի կամպանիաներ, դրամական միջոցների մոբիլիզացիա և այլն) կիրառման միջոցին, անհրաժեշտ է ցույց տալ բանվորին և կոլտնտեսականին, վոր այդ խնդիրների հաջող կատարումը հանդիսանում է յերկրի պաշտպանողական ունակութեան ամրացման ամենալավ ձևը: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր սյդ տեսակետից ա-

ուանձնապես կարեւոր և ՄՈՊՐ-ի աշխատանքները կարմիր բանակում :

